Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն առարկայի օլիմպիադա 2019թ.

ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ

8-9 - րդ դասարան

Տևողությունը՝ 120 րոպե:
Գնահատումը կատարվում է 20 միավորանոց համակարգով:
Տեստային և գրավոր առաջադրանքի մեկ ճիշտ պատասխանը գնահատվում է 1(մեկ) միավոր:

1. S-72 Տանկի հիմնական սպառազինությունը՝

ա) 7,62 մմ տրամաչափի գնդացիրն է ☐

բ) 7,62 մմ տրամաչափի գնդացիրը և 12,7 մմ տրամաչափի զենիթահրթիռային գնդացիրը ☐

գ) 125 մմ հարթափող թնդանոթն է ☑

դ) 135 մմ հարթափող թնդանոթն է ☐

2.Ի՞նչ պարգևներով են պարգևատրվում ՀՀ ազգային և Արցախի հերոսները.

ա) Մարտական Խաչ և Հայրենիք ☐ բ) Ոսկե Արծիվ և Մարտական Խաչ ☐

գ) Հայրենիք և Ոսկե Արծիվ ☑ դ) Հայաստանի ազգային հերոս ☐

3. Ազիմուտով շարժվել նշանակում է.

ա) որոշել շարժման ուղղությունը և այն պահպանել նախատեսված նշանակետին հասնելու համար: ☑

բ) որոշել շարժման ուղղությունը և այն օգտագործել նախատեսված նշանակետը շրջանցելու համար: ☐

գ) գտնել տեղանքում նախանշված կետը և հասնել այդ կետին: ☐

դ) որոշել շարժման ուղղությունը և շարժվել դեպի նշանակետը ☐

4.Ի՞նչ է կողմնացույցը:

ա)Կողմնա ցույցը պարզագույն սարք է, որով որոշում են Հյուսիսը, հարավը, Արևելքը և Արևմուտքը: ☐

բ)Կողմնացույցը պարզագույն սարք է՝ հորիզոնի կողմերը կամ կոմնորոշիչի ուղղությունը որոշելու համար: ☑

գ) Կողմնացույցը բարդ սարքավորում է՝ հորիզոնի կողմերը կամ կողմնորոշիչների ուղղությունը որոշելու համար: ☐

դ)Կողմնացույցը պարզագույն սարք է՝ առարկաների դիրքերը և հեռավորությունները որոշելու համար: ☐

5. Քանի՞ կանոնադրություն ունի ՀՀ զինված ուժերը.

ա)	1	v	բ)	3	
գ)	2		դ)	4	

6. Ո՞րն է միջազգային մարդասիրական իրավունքի էությունը.

ա) Կանոնակարգում է զինված ընդհարումները՝ նպատակ ունենալով թեթևացնել մարդկային տառապանքները, մեղմել պատերազմի պատճառած ցավալի հետևանքները: v

բ) Կանոնակարգում է զինված հարձակումները՝ նպատակ ունենալով ապահովել մարդկային կյանքերի անվտանգությունը: ☐

գ) Պաշտպանում է հարձակվողի իրավունքներն ու շահերը: ☐

դ)Պաշտպանում է հարձակման ենթարկվածի իրավունքներն ու շահերը: ☐

7. Վնասվածք ստանալու պահից սկսած առաջին կես ժամը կոչվում է.

ա)	<<Թանկ ժամանակ>>		բ)	<<Բարենպաստ ժամանակ>>	
գ)	<<Ոսկի ժամանակ>>	v	դ)	<<Հարմար ժամանակ>>	

8. Շարքի ճակատի հակադիր կողմը կոչվում է՝

ա)	Ետնակողմ		բ)	Թև	
գ)	Թիկունք	v	դ)	Ետնամաս	

9.Հրաձգության ամենահարմար դիրքը՝

ա) պառկած կրակելն է: v

բ) Ծնկած կրակելն է: ☐

գ) Կանգնած կրակելն է: ☐

դ) Հենված կրակելն է: ☐

10.Ադրբեջանի զինված ուժերի թվաքանակը՝

ա)	124 000 մարդ է:	բ)	144 000 մարդ է:	v
գ)	114 000 մարդ է:	դ)	214 000 մարդ է:	

11.Ո՞րն է մագնիսական միջօրեականը:
Մագնիսական սլաքի ցույց տված ուղղությունը, որն անցնում է կանգնած կետով, կոչվում է մագնիսական միջօրեական:

12.Դեռևս հին դարերում հայկական բանակի զորագնդերում գործում էր կենտրոնաձիգ համակարգ՝ տասնապետ, հիսնապետ, հարյուրապետ, հազարապետ, սպարապետ:

13.**Մողանքի նախանշաններն են՝** դռների ու պատուհանների փեղկերի սեղմվումը, պատերի վրա ճաքերի առաջացումը, ծառերի ու ցանկապատերի տեղաշարժը և այլն:

14.**Հորիզոնի կողմերը Արեգակի և ժամացույցի օգնությամբ որոշելու համար անհրաժեշտ է** ժամացույցը պահել հորիզոնական դիրքով և պտտել այնպես, որ փոքր սլաքը ուղղված լինի դեպի Արեգակը: Փոքր սլաքի և թվատախտակի <<1>> թվի միջև ընկած անկյունը պետք է մտովի կիսել երկու հավասար մասի: Անկյան կիսորդը ցույց կտա ուղղությունը դեպի հարավ: Մինչև կեսօր (13^{00}) թվատախտակի վրա սկսվող անկյունը կլինի <<1>> թվից ձախ, իսկ կեսօրից հետո՝ աջ:

15.**Ի՞նչ է կոման և ի՞նչ է պետք է անել դրա առկայության դեպքում:**

Կոման ուղեղի կեղևի կտրուկ ընկճումն է, որը բնորոշվում է գիտակցության կորստով: Պետք է հիշել՝ եթե ուշաթափությունը տևում է 3-5 րոպեից ավելի և անոթազարկ կա, ապա դա կոմա է, և տուժածին պետք է անհապաղ շրջել փորի վրա կամ կողքային անվտանգ դիրքի և գլխին սառը դնել:

16. Փոթորիկների և Մրրիկների ժամանակ բնակիչները պետք է հեռու մնան շենքերից, էլեկտրասյուներից, լարերից, պաշտպանվեն մոտակա ձորերում, առավակներում, փոսերում:

17.**Զինվորների և սերժանտական կազմի համար սահմանվել են հետևյալ կարգապահական տույժերը՝**

- հայտարարել նկատողություն,
- հայտարարել խիստ նկատողություն,
- ժամկետային ծառայության զինվորներին ու սերժանտներին զրկել զորամասի տարածքից հերթական արձակումից,
- զինվորներին նշանակել արտահերթ վերակարգում աշխատանքի,
- մեկուսացնել և պահել կարգապահական մեկուսարանում,
- զրկել գերազանցիկի կրծքանշանից
- իջեցնել սերժանտների պաշտոնը կամ մեկ աստիճանով՝ զինվորական կոչումը

18.**Հրաձգության ժամանակ պահպանվում են անվտանգության հետևյալ կանոնները**.

Պարապմունքից առաջ ղեկավարի հրամանով կամ ինքնուրույն ստուգել՝ լիցքավորված չէ՞, արդյոք զենքը:
Պահեստատուփը լիցքավորելիս ուշադիր հետևել՝ ուսումնական փամփուշտների մեջ չկա՞ն, արդյոք, մարտական փամփուշտներ:
Կտրականապես արգելվում է զենքը ուղղել մարդկանց վրա, անկախ այն բանից լիցքավորված է այն, թե՝ ոչ

19. Ազիմուտը կարող է լինել 0^0-ից մինչև 360^0**:**

20. **Ժամանակի առկայության դեպքում անհատական խրամատը պետք է խորացնել**
մինչև 60 սմ՝ կրակելու համար, ապա մինչև 110 սմ՝ կրակելու համար: